

ՍՈՒԵԴԻԱՅԻ ԲԱՐԲԱՌԻ ԽՏՐԲԷԿԻ ԽՕՍՈՒԱԾՔԸ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

ԳԱՂԹՈՒՀԻ ՀԱՆԱՆԵԱՆ

Յայտնի է, որ տարածքային տարբերակներով՝ բարբառներով, ենթաբարբառներով ու խօսուածքներով հարուստ լեզուներից մէկն է հայերէնը:

Պետականութեան, համաժողովրդական լեզուն նորմաւորող կենտրոնների, քաղաքակրթութեան զարգացման արդի պայմաններում առաւել արագ եւ ծաւալուն է ընթանում բարբառների վերացման գործընթացը: Ուստի այսօր, առաւել քան երբեւէ, լեզուաբանի համար առաջին անհրաժեշտութիւն է դառնում բարբառագիտական հետազօտութիւնը:

Ներկայումս հայերէնագիտութիւնը բարբառագիտական բաւական հարուստ աւանդոյթներ ունի: Սակայն շատ խնդիրներ, տարածքային դեռ շատ միաւորներ, դեռ չեն ուսումնասիրուել: Իսկ այդ միաւորներից շատերը կորել կամ կորչելու վտանգի տակ են, ուստի անհրաժեշտ է խիստ շտապողականութիւն, այլապէս իւրաքանչիւր յապաղում ու թերացում կարող է անվերադարձ կորուստների տեղիք տալ:

Այստեղ ներկայացուող խօսուածքը հայերէնի ծայր հարաւարեւմտեան կամ Անտիոքի տարածքի միաւորներից է: Այն Սուեդիա գաւառի (Ալեքսանդրէտի սանջաք, այժմ՝ Թուրքիայի Հաթայ նահանգի Սամանդաղ գաւառը) հայաբնակ Եօղուն-Օլուզ, իտրբէկ, Վակըֆ, Վերին եւ Ներքին Ազգիրներ, Ամաժ գիւղերի խօսուածքն է եղել, որը դեռեւս կենսունակ է եւ սուեդիահայերի աւագ սերնդի ներքին, ընտանեկան հաղորդակցման հիմնական միջոց:

Բարբառախօսների նուազումը, լեզուական միասնական միջավայրի բացակայությունը, ինչպէս եւ արտաքին ազդեցութիւնները սահմանափակում են խօսուածքի գործառնութեան շրջանակները: Այն առաւելագոյնը տարիների կենսունակութիւն ունի:

Բարբառը հայերէնի՝ դեռեւս կենդանի տարածքային միաւորներից է. խօսւում է ինչպէս բուն գաւառում՝ այնպէս էլ արտերկրի մի շարք գաղթօջախներում, յատկապէս Լիբանանի Այնճար ւաւանում, ուր մուսալեոցին շարունակում է իր հոգեւոր ու ֆիզիկական գոյութիւնը, պահում եւ ավանդում տոհմիկ նկարագիրն ու ավանդոյթները: Մուսալեոցիների մի հոծ զանգուած վերաբնակուած է Հայաստանի զանազան շրջաններում ու քաղաքներում, յատկապէս էջմիածնի շրջանի Նոր Մուսալեռ ւաւանում: Հայաստանում բարբառախօսների թիւը գնալով նուազում է:

Գիտութեան մէջ դեռեւս վերջնականապէս ճշգրտուած չէ, թէ երբուանից են հայերն այս տարածքներում հաստատուել: Յայտնի է, որ Տիգրան Մեծից շատ աւելի վաղ է հաստատուում նրանց գոյութիւնը այս ժայռածերպերին: Հնարաւոր է, որ այս հեռաւոր վայրերում էլ հայերն հիմնաւորուած են եղել ի սկզբանէ: Բարբառի զուտ լեզուական որոշ իրողութիւններ լրջօրէն խորհելու տեղիք են տալիս այս ուղղութեամբ:

Անտիոքի տարածքի հայ բարբառների մասին առաջին յիշատակութիւնները գտնում ենք անցեալ դարավերջի եւ մեր դարասկզբի հայ պարբերականների էջերում:

Բիւրակնի 1899 թուականի Յուլիսի 7-ի համարում Զ. Կենճեան ստորագրութեամբ տպուած է մի թղթակցութիւն, որը Նոր Կտակարանից (Յովհաննու Աւետարանի, գլ. ԺԲ) մի փոքրիկ հատուած է, ինչպէս հեղինակն է ասում, Անտիոքի մօտակայ հայաբնակ գիւղերի գաւառաբարբառով, առանց որոշակիօրէն նշելու խօսուածքը կրող գիւղերի անունները:

Յաջորդ վկայութեանը հանդիպում ենք Հանդէս Ամսօրեայի 1907 թուականի Յունուարի համարում: Այն «Նմոյշ մը Արամոյ գիւղին հայ լեզուէն» վերնագրով եւ Այծեամ ստորագրութեամբ «Հայր մեր»-ի եւ «Սաղմոս կամ մաղթանք»-ի փոխադրութիւնն է Արամոյի խօսուածքով:

Ոչ Բիւրակնի եւ ոչ ալ Հանդէս Ամսօրեայի թղթակիցը չի խօսում իր ներկայացրած նմոյշի լեզուական եւ կառուցուածքային առանձնայատկութիւնների մասին:

1911 թուականին հրատարակած իր Հայ Բարբառագիտութիւն (Ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների) աշխատութեան մէջ մեծավաստակ Հր. Աճառեանը հայ բարբառները դասակարգելիս

Կիրիկեան բարբառների մէջ առանձնացնում է Սուրբոյ բարբառը, որի մէջ նկատի ունի Արամոյի եւ շրջակայ գիւղերի խօսուածքները, իսկ Ասորիք եւ Լիբանան գաղթականական գծի մէջ, ի թիւս Կիրիկեան ուրիշ բարբառների՝ մտցնում է նաեւ «Անտիոքի Սուեդիա, Քեսաբ, Արամոյ եւ Հալէպի Քիլիս, Բեյլան եւ Զիսրի-Շղուր գիւղերը»⁽¹⁾։ Աճառեանն իր ուսումնասիրութիւնը կատարում է Բիւրակմի եւ Հանդէս Ամսօրեայի նիւթերի հիման վրայ։

Այնուհետեւ այս տարածքին Աճառեանն անդրադառնում է Հայոց Լեզուի Պատմութիւն (Երեւան, 1951, հ. 2), Լիակատար Քերականութիւն Հայոց Լեզուի (Երեւան, 1952-1961) եւ Հայերէն Արմատական Բառարան (առաջին ապակետիպ հրատարակութիւնը՝ Երեւան, 1926, երկրորդը՝ Երեւան, 1971-1979) աշխատութիւնների մէջ։ Մեծանուն հայագէտի՝ այս տարածքի ուսումնասիրութիւններն ունէին սահմանափակութիւններ, որոնք պայմանաւորուած էին մի կողմից իր ձեռքի տակ ունեցած փաստական նիւթի սակաւութեամբ, միւս կողմից՝ իր աշխատութիւնների նպատակադրումով եւ ուղղութեամբ։

Բարբառի ուսումնասիրութիւնը կատարուած է նաեւ Ա. Ղարիբեանի կողմից, որը գրեթէ ոչինչ չի աւելացնում եղածին։

Եղած ուսումնասիրութիւնների մէջ առ այսօր ամենամբողջականը Տ. Անդրէասեանի Սուեդիայի Բարբառը (Երեւան, 1967) մենագրութիւնն է։ Այստեղ առաջին անգամ քննութեան են առնուել խօսուածքի քերականական ողջ համակարգը, սուեդիացիների ծագման հարցը, նրանց՝ այս գաւառը գաղթելու մօտաւոր ժամանակաշրջանը։ Մենագրութիւնն ունի հարուստ բառացանկեր, որոնք եւ յատկապէս արժէքաւորում են այն։ Հարկ է, սակայն, նշել, որ այս աշխատութեան մէջ էլ չեն քննարկուած շատ իրողութիւններ, որոնք կազմում են այս տարածքի լեզուամտածողութեան ու լեզուավիճակի բուն իւրայատկութիւնը։

Սուեդիայի բարբառային նիւթի հաւաքման ու դասակարգման ուղղութեամբ արժէքաւոր աշխատանք են կատարել նաեւ Մուսայեռի Հայրենակցական Միութեան հրատարակած Յուշամատեան Մուսայ Լեւրան (Բէյրութ, 1970) գրքի հեղինակները։ Հետազօտողի համար հետաքրքրութիւն են ներկայացնում նմոյշներն ու բառացանկը՝ իրբեւ բառաքնական յետագայ հետազօտութեան ատաղձ։

Սուեդիայի երեք խօսուածքների բարբառային հիմնական յատկանիշների առանձնացում եւ նշանակում է կատարուած Գ. Զահուկեանի Հայ Բարբառագիտութեան Ներածութիւն (Երեւան, 1972 թ.) աշխատութեան մէջ, ուր հեղինակը մշակում է հետազօտական բոլորովին նոր մեթոդ։ Ընտրուած հարիւր յատկանիշների համապատաս-

խան աղիւսակներում նշանակուած են նաեւ Սուեդիայի երեք խօս-
ուածքների զուգաբանութիւնները: Աշխատութեան մէջ (Սուեդիայի
տարածքին վերաբերեալ հատուածներում) թէեւ կան մասնակի ան-
ճշգրտութիւններ ու վրիպումներ՝ սակայն դրանք չեն ազդում վերջնա-
կան արդիւնքի վրայ, եւ Զահուկեանի դասակարգումը մնում է Ան-
տիոքի տարածքի բարբառային միաւորների ամենաճշգրիտ եւ գի-
տական դասակարգումը:

Գնահատելի աշխատանք է կատարել նաեւ Թովմաս Հաբեշեա-
նը, որի Մուսա-դադի Պապեմական Արագաւանգներ (Այնջար, 1986)
գրքում հաւաքուած բանահիւսական ու ազգագրական նիւթերը, ինչ-
պէս եւ հարուստ բառացանկերը կարող են օգտակար լինել բառաքն-
նական յետազայ ուսումնասիրութիւնների համար, մանաւանդ որ
դրանք հաւաքուած եւ խմբաւորուած են ազնիւ մշակի եւ անկեղծ
նուիրեալի բարեխղճութեամբ:

Ներկայացուող խօսուածքի ուսումնասիրութիւնը կարեւոր-
ւում է նաեւ այն առումով, որ հայերէնի հնագոյն շրջանի մի շարք
հետաքրքրական իրողութիւններ (դերանուանական որոշ ձեւեր,
նախդիրների կիրառութեան, բայական յարացոյցի որոշ միաւորներ)
իրենց գոյութիւնը շարունակում են միայն այս տարածքում:

Ընդհանուր լեզուաբանական արժէք է ներկայացնում առկա-
յացման քերականական կարգի իւրայատուկ արտայայտութիւնը, որը
լեզուից խօսք անցման ձեւաբանական դրսեւորումն է:

Բնաւ յաւակնութիւն չունենալով այս սեղմ յօդուածի սահ-
մաններում ներկայացնել խօսուածքի կառուցուածքային ողջ բնութա-
գիրը՝ կ'աշխատենք խիստ համառօտակի ներկայացնել նրա հնչիւնա-
կան եւ ձեւաբանական համակարգերի ամենաբնորոշ առանձնայատ-
կութիւնները:

Բացի գրական հայերէնի ա, է, ի, ու, ը ձայնաւորներից՝
խօսուածքն ունի նաեւ օ, օ, ու, օ, է', օ' ձայնաւորները (" նշանը
քմայնութիւն է նշանակում, '–ն՝ տեւականութիւն, երկարութիւն):
Քմայնութիւնն առաջացնում է իմաստազատիչ հակադրութիւններ,
խիստ սահմանափակ դիրքերում այն արժէքաւորւում է հնչոյթաբա-
նօրէն: Այսպէս, օրինակ, խոլ – խուլ (հոլ – խալ), խոլ – խուլ
(խոլ – խալ), խաղոլ – խաղուլ (խաղոլ – խաղացոլ), բարոլ –
բարուն (պարոն – պարան) եւայլն: Տեւականութիւնը (հնչիւնի եր-
կարութիւնը) չի հնչոյթաւորւում, հանդէս է գալիս որոշ դիրքերում,
ունի միայն ձեւաբանական արժէք: Այսպէս՝ արմանգ – արմանգ
(արմունկ – արմունկը), մանգանկ – մանգանկ (մատներ – մատները),
մանգ – մանգ (մուկ – մուկը) եւ այլն:

Խօսուածքում բառի ձայնաւորման մէջ կարեւոր դեր է կատարում վերջնավանկի շեշտակի միաւորը՝ առաջացնելով այս կամ այն հնչոյթի դիրքային տարբերակներ: Սանշանակում է, որ եթէ շեշտակիր վանկարարը առաջնային շարքի միաւոր է, ապա նախաշեշտ բոլոր ձայնաւորները շարժում են դէպի այդ շարքը: Այսպէս, օրինակ, գրական հայերէն հարիւր ձեւին խօսուածքում համապատասխանում է հնարք: Քանի որ այս բառի վերջնականում ունենք առաջնային շարքի միջին բարձրացման է ձայնաւորը, նախաշեշտ ա-ն քմայնացել է՝ շարժուելով դէպի առաջնային շարք:

Հին հայերէնեան ձայնաւորները խօսուածքում դրսեւորում են զանազան համապատասխանութիւններ: Չժանրաբեռնելու համար աշխատանքը՝ հոս ներկայացւում են շեշտակիր վանկարարների հիմնական տեղաշարժերը: Ա-ն շեշտակիր դիրքում զարգացել է ա → ու, ա → ը ուղղութեամբ: Այսպէս՝ հաց → հուծ, աղ → ուղ, քար → քուր, աման → ամուն, աշխարհ → անշուր (ա → ու), բակ → պըգ, ձագ → ծըկ, դանակ → տանըգ, դաստառակ → տաստըռգ եւ այլն:

Է(ե)-ի բոլոր դիրքերում առկայ է է(ե) → ի համապատասխանութիւն: Այսպէս՝ եզր → իզգիր, ես → իս, եփել → իպիլ, էշ → իշ, էգ → իկ (վրժըվիկ), սէր → սիրկ, երեկոյ → իրիգէուն, երես → իրիս... Այս ձայնաւորի շեշտակիր դիրքի զարգացումն ընթացել է դէպի ձայնաւորի բարձրացման փոփոխութիւն՝ առաջընթաց ուղղութեամբ:

Ը-ն հայերէնի գրական բոլոր արտայայտութիւններում շեշտագուրկ է եւ ունի աւելի սուղ արտասանութիւն: Այս է պատճառը, որ լիահունչ ձայնաւորները շեշտագրկուելիս՝ վերածւում են ը-ի կամ՝ ընկնում: Ը-ն, որն յաճախ իբրեւ ձայնային յենարան է հանդէս գալիս՝ բաղաձայնական կուտակումները կանխելու եւ արտասանութեան լարուածութիւնը թուլացնելու համար՝ հնչիւնական շղթայից կարող է դուրս ընկնել:

Դեռեւս հին հայերէնի բանաւոր-խօսակցական տարբերակների համար, բացի վերջնականի հիմնական շեշտից, ենթադրուել է նաեւ առաջնականի երկրորդական մի շեշտ⁽²⁾: Այդ վիճակը շարունակուել է նաեւ միջին հայերէնի չրջանում, որի շնորհիւ էլ առաջնականի ձայնաւորները չեն տեղաշարժուել:

Խորքէկի խօսուածքում բառակցքի երկրորդական շեշտ ունեն հիմնականում երկվանկ բառերը: Շեշտի այսպիսի դրութեան շնորհիւ է, որ որոշ դէպքերում հին ը-ին խօսուածքում համապատասխանում են առաւել լիահունչ ձայնաւորներ: Շփական ժ, շ, ս եւ ունգային Ա հնչիւններին անմիջապէս նախորդող նախաշեշտ դիրքում հին ը-ին

համապատասխանում է խօսուածքի ի-ն: Այսպէս՝ դ(ը) ժուար → տի-
ժուր, յ(ը) ստակ → իստըգ, ն(ը) շան → նիշուն, ընջուղ → ինջէուղ...

Հին հայերէնեան ը-ն դրսեւորում է ը → ր, ը → ի, եւ որոշ
դէպքերում՝ նաեւ ը → ու [ւ(ը) դինձ → բուղօյնձ, ընկոյզ → ուն-
դօյզ] համապատասխանութիւններ: Նկատելի է, որ այն փոխում է
միաժամանակ ե՛ւ բարձրացումը, ե՛ւ շարքը:

ՈՒ-ն տեղաշարժուել է միայն շեշտակիր դիրքերում՝ դրսեւո-
րելով ու → օ (ուենդ → հօնդ, մութ → մօտ, ու → օյ (ութ → օյտտը),
ու → էու (ուղտ → էուղդ, թթու → թըտտէու, լեզու → լիզզէու) հա-
մապատասխանութիւնները: Այս ձայնաւորն էլ է փոխել միաժամանակ
ե՛ւ շարքը, ե՛ւ բարձրացումը: Փոփոխութիւնն ընթացել է լայն բաց-
ուածքից նեղ բացուածք ուղղութեամբ:

Ի-ն խօսուածքում հանդէս է գալիս ի → ա (տարի → դարա,
այգի → իկկա, լեղի → լիղա) ի → է (կարմիր → գարմէր, գետին
→ կիդէն, գիրկ → կէրգ): Բ + առաջնալեզուային դիրքում դրսեւո-
րում է ի → ու, իսկ փակ վանկի ետնալեզուեաններից առաջ՝ ի →
աւ համապատասխանութիւնները: Այսպէս՝ սիրտ → սուրդ, ծիրտ →
ծուրդ (ի → ու), թեղանիք → թիղնակ, ժանիք → ժանակ, ծաղիկ →
ծաղաւ:

Քանի որ ի-ն ամենանեղ բացուածք ունեցող ձայնաւորն է,
ուստի լայնից նեղ շարժման ուղղութիւնն արդէն բացառուած է: Այս-
տեղ փոխում է բարձրացումը՝ վերինից ստորին ուղղութեամբ: Ողջ
համակարգի ներսում հաւասարակշռութիւնը պահպանելու միտումով
ի-ի տեղաշարժն ընթանում է արդէն նեղ բացուածքից դէպի աւելի
լայն բացուածքի ուղղութեամբ:

Օ(Ո) ձայնաւորի տեղաշարժը խօսուածքում կատարուել է այն
ժամանակ, երբ իր աւարտին էր հասել աւ → օ համահայկական ան-
ցումը եւ որոշ տարածքներում նոյնացել էին հին ո-ն եւ աւ → օ-ն:
Առաջնալեզուայիններին եւ կոկորդայիններին նախորդող շեշտակիր
դիրքում հանդէս է գալիս օ(n) → ու (նոր → նուր, չոր → չուր, չող
→ չուղ, խոզ → խուզ, կթոց → քթթուծ, չորք → չուկ, խանձող →
խանձուղ...), միավանկ բառերում՝ օ(n) → ու (ծով → ձուկ, կով
→ գուկ, տօն → դուն, օր → ուր, օղ → ուղ(աղ), օձ → ուծ...), երկ-
վանկ բառերի նախաշեշտ դիրքում մե'րթ օ(n) → ի (մորեիս → միրիիս,
գոմէշ → կիմիշ, ոսկի → իսկա, բոկեղ → պիգիղ...), մե'րթ օ(n)
→ ու (հովիւ → հուկէվ, գովել → կուվիլ, չողիք → չուղանկ, օժիտ
→ ուժէդ...) համապատասխանութիւններով: Այստեղ փոխուել է ե՛ւ
լեզուի բարձրացման աստիճանը՝ միջինից դէպի վերին, ե՛ւ շարքը՝
ետինից դէպի առաջնային:

Պօսուածքն ունի օ'ու, է'ու, օ'յ, ւի'յ, ւի'յ, ւի'ու, է'ու, է'յ, երկրարբառները, որոնցից ելակէտային ձեւերում հանդէս են գալիս միայն օ'ու, է'ու, օ'յ, իսկ միւսներն առկայացման հիմքերի կամ թեք ձեւերի հերթագայութիւններ են: Ունեն վանկակազմիչ արժէք: Ըստ շեշտի բնոյթի իջնող կամ թուլացող են, այսինքն՝ շեշտը կրում են վանկաբնի ձայնաւորները: Այս բոլոր երկրարբառներն էլ նորագոյացութիւններ են:

Հին հայերէնեան գրեթէ բոլոր երկրարբառներն էլ խօսուածքում մենարբառների (պարզ ձայնաւորների) են վերածուել: Բացառութիւն է հին ոյ-ը, որը չի տեղաշարժուել, ինչպէս՝ քոյր → քօյր, թոյլ → թօյլ, բոյն → պօյն եւ այլն:

Իի → օյ (ձիւն → ծօյն, սիւն → սօյն, հիւթ → հօյտ) անցման համար ենթադրում ենք ձոյն, սոյն, հոյթ բարբառային հնագոյն տարբերակները:

Պօսուածքի բաղաձայնական համակարգի միաւորներն իրենց հնչիւնական, արտասանական առանձնայատկութիւններով գրեթէ նոյնական են գրական հայերէնի համապատասխան միաւորներին: Ի տարբերութիւն հայերէնի գրական դրսեւորումների՝ այստեղ առկայ է ղ ետնալեզուային խուլ պայթափականը, որը յետագայում, թերեւս փոխառեալ բառերի հիմքի վրայ առաջացած տարր է:

Պայթականներն ու պայթափականները ներկայանում են եռանդամ հակադրութեամբ՝ ձայնեղ (բ, գ, դ, ձ, ջ), պարզ խուլ (պ, կ, տ, ծ, ճ) եւ շնչեղ խուլ (փ, ք, թ, ց, չ), չփականները՝ երկանդամ հակադրութեամբ՝ ձայնեղ (զ, ծ, վ, ղ) եւ խուլ (ս, շ, ֆ, խ), ձայնորդները միաշարք, մենանդամ միաւորներ են՝ լ, ը, մ, ն, յ, ո: Առանձին են մնում և կոկորդային խուլ չփականը եւ ղ ետնալեզուային պայթափականը: Վերջինս գործածուում է հիմնականում փոխառեալ (արաբական, թուրքական), առանձին դէպքերում՝ նաեւ բնիկ բառերում: Այսպէս՝ ղալան (այլեւս, արդէն), իրիղ (երէկ), ունդէզ (ընկոյզ), ըռըսդըզ (աստղ), ղատ (անգամ) ղուվատլա (ուժեղ ղնլնմ (մատիտ)...

Պայթականներն ու պայթափականները գործառնում են բոլոր դիրքերում, սակայն նրանց հնչուեթային տարբերակման ուժեղ դիրքը բառասկիզբն է: Այսպէս՝ բանէր (պանիր) → պանէր (աշխատէիր), բիրիլ (բրել) → պիրիլ (բերել), գարիլ (կարել) → քարիլ (նետել, գցել), գուղ (կող) → քուղ (քող), դուր (տէր) → տուր (դէպի ո՞ւր, ո՞ր կողմ), եւ այլն:

Շնչեղ խուլերի գործառնական ոլորտը սահմանափակուում է միայն բառասկզբով, ինչպէս՝ թինէր, փիղօր, քօյր, ցուխ, չամօճ, չաստէում, չո՞ւծ, եւ այլն:

Շփականները ձայնեղութիւն-խլութիւն հնչութեային յատկանիշով հակադրուում են հիմնականում բառամիջի դիրքերում: Այսպէս՝ իժիլ (արժենալ) - իշիլ (նայել), իզ (հետք) - իս (ես), հուզ (հազ) → հուս (հոս, այստեղ), զանգզիլ (զարկել, շահել) → սանգզիլ (սատկել), խիզզիլ (խոզեր) - խիսսիլ (մեռնէր), եւ այլն:

Միջձայնաւորական դիրքում խօսուածքում յաճախ առկայ են տեւական բաղաձայններ, որն արդիւնք է մե'րթ հնչիւնների անկման (անկանել → բնկնել → իննիլ, կանգնել → ղաննիլ...) մե'րթ էլ առաջնամանութեան (ելանիմ → բննիմ, գտանել → ղըննիլ) մե'րթ էլ առաջնավանկի ուժգնացման հետեւանքով գաղտնավանկ ը-ի լիահունչ արտասանութեան (կծու → գըձձէու, թթու → թըտտէու, պսակ → բըսսըգ, կծիկ → գըձձակ, ծխել [ծուխ անել] → ձըխխիլ), եւ այլն: Առաջնավանկի ուժգնացման արդիւնք պիտի դիտել նաեւ միւս ձայնաւորներէից յետոյ առկայ բաղաձայնի տեւականութիւնը, ինչպէս՝ այգի → իկկա, լեզու → լիզզէու, ածել → անձձիլ, աճել → իջջիլ...:

Հին հայերէնեան բաղաձայնները խօսուածքում ենթարկուել են համակարգային տեղաշարժերի: Պայթականների ու պայթաչփականների համակարգում կատարուել է երրորդ տեղաշարժը (տեղաշարժ-տեղափոխութիւն)՝ ձայնեղներն ապաձայնեղացել են, խուլերը՝ ձայնեղացել: Այսպէս՝ բ → պ, գ → կ, դ → տ, ձ → ծ, ջ → ճ (բան → պուն, գորտ → կո՛ւրդ, դանակ → տանձգ, ձիւն → ծոյն, ջուր → ճօր) եւ հակառակը՝ պ → բ, կ → գ, տ → դ, ծ → ձ, ճ → ջ (պառաւ → բառուվ, պատ → բուդ, տալ → դուլ, տարի → դարա, կաթ → գէտ, ծառ → ձուռ, ճիւղ → ջէուղ):

Զի տեղաշարժուել շփականների (ղ, խ, ժ, չ, վ, ֆ, գ, ս, հ) շարքը: Այսպէս՝ խոզ → խո՛ւզ, վախ → վուխ, հազ → հուզ...

Շնչեղ խուլերը ոչ բառասկիզբի դիրքերում ապաշնչեղացել են՝ վերածուելով պարզ խուլերի:

Բաղաձայնական համակարգի առանձին, ոչ համակարգային որոշ տեղաշարժեր ունեն դիրքային, փոխազդեցական պայմանաւորուածութիւն:

Բառերի ձեւաբանական փոփոխութիւնները խօսուածքում իրացուում են հոլովմամբ եւ խոնարհմամբ: Հոլովում են առարկայանիչ եւ անուանողական արժէք ունեցող, խոնարհւում են՝ եղելութիւն, շարժուող, փոփոխուող, յատկանիշ արտայայտող բառերը: խօսուածքում առկայ են հոլովական թեքման երկու տիպեր՝ անուանական եւ դերանուանական:

խօսուածքում առկայ են խօսքիմաստային ինն հիմնական բառախմբեր՝ գոյական, ածական, թուական, դերանուն, բայ, մակբայ,

կապ, չաղկապ եւ եղանականիշ բառեր ու բառախմբեր: Վերջիններս ներառում են վերաբերական բառերն ու ձայնարկութիւնները:

Գոյականը խօսուածքում բնութագրւում է թուի, հոլովի, առկայացման քերականական կարգերով: Անուան թուային հակադրութիւն ստեղծւում է թուակազմ ձեւոյթների յաւելումով: Այս ձեւոյթներն են՝ -իւր, -նա, -նիր, -վընա, -վա, -կ, -անկ, -դակ, -դակ, -դա, -դուն, -վուն, -ստուն, -վդա, -ակ, -անդա, որոնք հիմնականում իրենց համապատասխանութիւններն ունէին հին հայերէնի համակարգում, իբրեւ հաւաքական մասնիկներ: Խօսուածքն ընդլայնել է դրանց գործառնական ոլորտները եւ գիտակցել իբրեւ հիմնական յոգնակերտներ: Ծոգնակերտները կցւում են եւ մաքուր, եւ հերթագայուած հիմքերին: Թուակազմ հիմքերի եւ ձեւոյթների զուգորդելիութեան հիմնական չափանիշները վանկաքանակութիւնը, իմաստային եւ ձեւական յատկանիշներն են: Որոշ դեր են կատարում նաեւ հիմքի ձայնաւորումները: Վճռական յատկանիշը, սակայն, վ ա ն կ ա ք ա ն կ ա կ ու թ իւ ն է: Բաղադրեալ յոգնակերտների մէջ բազմակիութեան իմաստն արտայայտում են վերջին բաղադրիչները: Կիրառման յաճախականութեան տեսակէտից գերակշիռ դիրք են գրւում -իւր, -նա, -նիր յոգնակերտները:

Առկայացումը խօսուածքում ունի խիստ իւրայատուկ արտայայտութիւն: Անունները խօսքի մէջ հանդէս են գալիս երկու հիմքով: Երբ բառը հանդէս է գալիս իբրեւ սեռի, տեսակի ընդհանուր անուանում՝ հիմքը բ ա ց ա ր ձ ա կ է եւ չի նշութաւորւում: Սա բառի ելակէտային, նաեւ՝ բառարանային ձեւն է: Իսկ երբ նրանով մասնաւորւում, առանձնացւում է առանձինը, որը տուեալ պահին խօսքի օբյեկտ է դառնում, հիմքն արդէն նշութաւորւում է եւ հանդէս է գալիս իբրեւ համակարգային միաւոր: Այդ նշութաւորումը կատարւում է յատուկ հերթագայութիւնների միջոցով, որոնք խիստ հետեւողական են եւ բացառութիւններ չեն ճանաչում:

Առկայացման համակարգում գործում են ա/օ (ծան/ծօն, մար/մօր, հարսնակ/հարսնօկ — ձայն/ձայնը, մայր/մայրը, հարսանիք/հարսանիքը), ա/էն (ընդանա/ընդանէն, կինա/կինէն — ազգական/ազգականը, գինի/գինին), ան/ան (մանգ/մանգ, ձաղանգ/ձաղանգ — մուկ/մուկը, ծաղիկ/ծաղիկը), եւ այլն:

Առկայացուող անուան շեշտակիր վանկարարը ենթարկւում է կա'մ որակական (պուն/պէուն, սնւրդ/սօյրդ), կա'մ քանակական (մանգանկ/մանգանկ, իշանկ/իշանկ), կա'մ էլ՝ եւ որակական, եւ քանակական փոփոխութեան միաժամանակ (սաղանակ/սաղանօկ, մրրգանկ/մրրգօնկ):

Պօստաժքն ունի ս, դ, ն, ը որոշեալ եւ մը, ըմ անորոշ յօդերը, որոնք դրուում են առկայացման հիմքերի վերջում: Բազմաձայնահանգ բառերի որոշեալութիւնն արտայայտուում է առկայացման անյօդ հիմքով (ս, դ յօդերն այս դէպքում միայն ստացականութիւն են արտայայտում):

Որոշեալութիւն է արտայայտում նաեւ զ նախդիրը, որն աւելանում է առկայացուող անուան սկզբից, իսակ եթէ բառն ունի որեւէ վերադիր, զ-ն դրուում է վերադիրի վրայ: Այսպէս՝ իս իսկիծա զ'թաուխտ (ես գցեցի գիրքը) — իս իսկիծա զ'ադ թաուխտ (ես գցեցի այդ գիրքը):

Սուեդիա-Քեսաբ բարբառախմբի ամենաինքնատիպ երեւոյթը ի դերանուան առկայութիւնն է, որն ուղիղ խնդիր կիրառութեամբ միշտ զ նախդիրով հանդէս է գալիս եւ կապւում է միայն որոշեալութեան գաղափարի հետ: Այն դրուում է արդէն առկայացուած, մասնաւորուած, որոշակիացուած անձերի ու առարկաների փոխարէն, դառնալով այն բառի խնդիրը, որի հետ հանդէս է եկել: Ի դերանունն ունի շարահիւսական բազմազան կիրառութիւններ, որոնք հանգամանօրէն քննարկուած են մեր անտիպ մենագրութեան մէջ: Ի դերանունն արտայայտում է միայն մասնաւորման իմաստ՝ առարկայական զանազան վերաբերութիւններով: Նկատի ունենալով նրա արտայայտած այդ ընդհանուր իմաստը, այն անուանել ենք մ ա ս ն ա լ ու ռ մ ա ն գ ր ա մ ու ն: Իր գործառնական արժէքով որոշիչ ը, ն եւ ստացական ու դիմորոշ ս, դ յօդերի հետ այն դրուում է նոյն կարգի մէջ եւ հանդէս գալիս իբրեւ առկայացման իւրայատուկ միջոց: Օրինակ՝ Ուսկէ գիրու զ'խընձօյր (Իսկուհին կերաւ խնձորը), Ուսկէ գիրէու՛զի (Իսկուհին կերաւ այն):

Քերականական առկայացուցիչ է նաեւ էական բայը, որը խօսողութեան տուեալ փաստի մէջ հանդէս է գալիս իբրեւ առարկայի՝ վերագրուող յատկանիչը մասնաւորող, առկայացնող միջոց: Այսպէս՝ սիրէուն անկէն/անկան սիրաուն ի (սիրուն աղջիկ/աղջիկը սիրուն է):

Այսպիսով, խօստաժքում առկայացումն ունի երեք դրսեւորում՝ ա) յօդային, բ) խնդրային, գ) ստորոգական:

Պօստաժքի հոլովման համակարգում առկայ են հոլովական, թուային եւ առկայացական իմաստներ: Տարբերակուած են հոլովական չէզոք (անուանողական, ելակէտային) եւ ոչ-չէզոք կամ առկայացական հիմքերը: Հոլովումը խօստաժքում իրացուում է ե'ւ մասնակաւորմամբ, ե'ւ հնչիւնական հերթագայութիւններով: Եզակիի եւ յոգնակիի հոլովական հակադրութիւնները դրսեւորուում են հիմնա-

կանում թուակազմ ձեռքերով, որոնք մենիմաստ (միայն բազմակիութիւն արտայայտող) միաւորներ են: Գործում են հոլովման հետեւեալ տիպերը՝ ա) Մասնիկաւոր՝ ը/էն, էոն, օոն, վը/վէոն, վօոն, ը/օյճ⁽³⁾, բ) Հերթագայական՝ ա/օու, է/իյէու, ու/ւնվօ (ուր/ւնվօր — օր/օրուայ), գ) Գրաբարատիպ՝ անկ/օյծ, անկ/օունծ, անկ/էոնծ, ակ, ըկ, ընկ/օյծ, կ/էուծ, այծ:

Ոոնարհման համակարգում գործում են բայական հինգ լծորդութիւններ՝ ի, ու, է, օու, էու, որոնք հին հայերէնեան ձեւերի բարբառային համապատասխանութիւններն են: Բայի անդէմ ձեւերը բնութագրում են միայն սեռի, իսկ ղիմանդանակային ձեւերը՝ նաեւ դէմքի, թուի, եղանակի ու ժամանակի քերականական կարգերով: Եղանակային հակադրութիւնն արտայայտում է նախամասնիկների (գարտում, գէու գարտում, բըր գարտում), իսկ թուային, ղիմային ու ժամանակային հակադրութիւնները՝ վերջաւորութիւնների եւ հիմքակազմ ածանցների միջոցով: Այսպէս՝ գէու գարտում (կարկարդում եմ), գէու գարտօր (կարդում էի), գարտածա (կարդացի), գարտու (կարդա), մը գարտուր (մի՛ կարդա), եւ այլն:

Պօսուածքը վերացրել է գալ, լալ, տալ բայերի անորոշի միավանկութիւնը՝ հիմքի սկզբում աւելացնելով ու աճականը (ուկիլ, ուլիլ, ուղուի-իլ, որից՝ ուղում):

Անդէմ ձեւերը եօթն են՝ անորոշ (կըրիլ, գարտիլ), ընթացակցական (կըրըլնիկան, գարտըլնիկան), ապառնի (կըրիլա, գարտիլա), վաղակատար (կըրէյր, գարտածօյր), բարակատար (կըրուձ, գարտածուձ), ենթակայական (կըրուղ, գարտածուղ), ժխտական (կըրի, գարտու):

Պօսուածքում տարբերակուած են ներգործական ու ներգործակերպ եւ կրաւորական ու կրաւորակերպ բայերի խոնարհումները:

Ոոնարհման համակարգում բայը հանդէս է գալիս ստորադասականի ապառնի եւ անցեալ, սահմանականի անցեալ կատարեալ, հրամայականի բուն եւ արգելական, պատմողականի վաղակատար ներկայ եւ վաղակատար անցեալ ձեւերով:

Ունի երեք հիմք՝ ներկայի, կատարեալի եւ դերբայականի, որոնցից խոնարհման մէջ հանդէս են գալիս առաջին երկուսը: Պօսուածքը պահպանել է գրաբարի հիմքակազմութեան հիմնական սկզբունքները, ինչպէս նաեւ՝ սահմանականի անցեալ կատարեալի եզակի բրորդ դէմքի ե/է աճականը՝ ի համապատասխանութեամբ (էառ/իուր, եթող/իթօուղ, եբեր/իպիր, եւ այլն):

Բայական յարացոյցներում գերիշխող են համադրական ձեւերը:

Առհասարակ խօսուածքի բայական համակարգը աւելի հնատիպ է եւ դրսեւորում է հիմնականում հին հայերէնեան օրինաչափութիւնները:

խօսուածքի ձեւակազմութեան մէջ գերիշխողը կցական կառուցատիպն է:

խօսուածքը հայերէնի աւելի ուշ կազմաւորուած տարածքային միաւորներէն է:

Երեւանի պետական համալսարան

27 Հոկտեմբերի - 1992թ.

Գ. Հ.

-
- (1) ՏԽ՝ Հր. Անտոնեան, Հայ Բարբառագիտութիւն (Ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների), Մոսկուա — Նոր-Նախիջեւան, 1911, էջ 28:
 - (2) ՏԽ՝ Ա. Մեյէ, Դասական Հայերէնի Համեմատական Քերականութեան Ուրուագիծ, Ժընեւ, 1988, էջ 17:
 - (3) Սեռականի չէզոք(ը) եւ առկայացական (էն եւ միւսները) հիմքերի վերջաւորութիւններն են:

THE KHEDERBEK SPEECH VIS-À-VIS THE DIALECT OF SWEDIA (A general survey)

(SUMMARY)

GAGHTOUHI HANANIAN

After presenting the work and study of the early Armenian linguists and grammarians who have tackled with the phonetic, idiomatic and grammatical characteristics of the dialect of Swedia - Kesap, the author delves deep into the search of the philosophical and grammatical particularities of the dialect and finds its differences and resemblances with the classical Armenian. According to her study, Hananian finds that due to various influences there have happened certain phonetic changes both in the vowels and consonants, in the form of the classical Armenian words used in the dialect, some suffixes have been lost, while new ones have been created, and, on the other hand some of the suffixes and affixes lost in modern Armenian have been kept in Swedia - Kesap dialect. Concomitant with these, the author finds through her thorough and all inclusive study that the Swedia - Kesap dialect is the direct continuation of the classical Armenian, it is of the agglutnant type and has taken shape only quite lately, as some other Armenian dialects.